

**ՀԱՅԵՐԻՆ ՊԱՐՄԿԵՐԵՆ ՈՒՍՈՒՑԱՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԿԱԶՄՎԱԾ
ԴԱՄԱԳՐՔԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ
(ըստ «Պարսկերեն եւ հայերեն քերականություն» ձեռագրի)***

ԱՍՏԴԻԿ ԳԵՂԱՄՅԱՆ

Իրանահայության շրջանում XVI-XVII դարերից սկիզբ առած ազգային կրթական գործը և տպագրությունը նշանավորվեցին նաև հայ դպրության վերածնունդով, ինչը միտված էր իրանահայերի ազգային, կրոնական և մշակութային ինքնության պահպանմանը պարսկախոս միջավայրում: Իրանական տիրապետության սահմաններում բնակվող հայերը, առօրյա շփման անհրաժեշտությունից ելնելով, հարկադրված էին տիրապետել խոսակցական պարսկերենին: Ավելի ուշ արդիական է դառնում նաև գրավոր պարսկերենի իմացությունը, որի մասին վկայող եզակի փաստաթուղթ է Նոր Ջուղայի Ս. Ամենափրկիչ վանքի ձեռագրատանը պահվող Հ^մ306 «Պարսկերեն եւ հայերեն քերականություն» ձեռագիրը: Այն գրվել է 1846 թ. Բատավիայում՝ «ի հայրապետութեան տեառն Ներսէսի եւ յառաջնորդութեան տեառն Յովհաննու Սուրենեանի», իսկ գրիչը «Գեորգ Աւետեան Չաքարեանց Ջուղայեցին» է: Առաջաբանում վերջինիս թողած տեղեկությունները վկայում են, որ XIX դարում իրանահայատակ հայերի շրջանում առաջ էին եկել պարսկերենի գործածության բոլորովին նոր պահանջներ՝ «յերկրորդ հայրենիս մեր ի Նոր Ջուղա, ի ձեռն խոհական եւ քաջ հովուաց հաստատեալ են երեք դպրոցք, յորս մանկունք սիրելի ազգի մերոյ բացի հայերէնն, ուսանեն նաեւ զպարսկերեն լեզու»:

Այդ ձեռագիրը բաղկացած է պարսկերենի քերականությունից, բանաստեղծական տաղաչափությունից, պարսկերեն-հայերեն բառարանից, Մաադիի «Գոլեստան»-ի 8-րդ գլխի թարգմանությունից և բովանդակությունից: Կարելի է համարել, որ ձեռագիրը պարսկերենի ամբողջական ձեռնարկ է:

Հոդվածում ձեռագիր դասագրքի և մեզ հասած դպրոցական առարկայացանկերի հիման վրա հնարավոր է դառնում տարրորշել հայերի շրջանում արաբատառ գրի ու գրավոր պարսկերենի՝ կրթական գործի մաս դառնալու ժամանակաշրջանը^{**}: Ձեռագրում տեղ գտած նյութը քննելու միջոցով նաև ցույց է տրվում իրանահայատակ հայերի շրջանում գրավոր պարսկերենի ուսուցման մեթոդաբանությունը՝ այն համեմատելով նույն ժամանակաշրջանում տեղացիների համար ստեղծված պարսից լեզվի այլ դասագրքերի հետ: Կարևոր է

* Հետազոտությունն իրականացվել է ՀՀ ԿԳՄՍՆ գիտության կոմիտեի տրամադրած ֆինանսավորմամբ՝ 21T-6B125 ծածկագրով գիտական թեմայի շրջանակում: Այն որպես գիտաժողովի նութ ներկայացվել է 2022 թ. դեկտեմբերի 1-3-ը Մատենադարանում կայացած երիտասարդական 8-րդ գիտաժողովին:

** Հոդվածում չենք անդրադառնում XVII դարում կաթոլիկ քարոզիչների կազմակերպած դպրոցական գործի ընթացքում հայերին պարսկերեն սովորեցնելուն:

նան հասկանալ, թե դասագրքում ընդգրկված «Գոլեստան»-ն ինչքանով է ծառայել ուսումնական գործին հայկական միջավայրում:

Բանալի բառեր – *քերականություն, ձեռագիր, ուսումնական ձեռնարկ, բառարան, դպրոց, գրավոր պարսկերեն, արաբատառ գիր, գրական երկ, «Գոլեստան»*

XVIII դարը նշանավորվում է հայ մտքի նոր վերածնունդով: Եվրոպայում տեղի ունեցող հասարակական-քաղաքական փոփոխություններն իրենց արձագանքն էին գտնում նաև Արևելքի ժողովուրդների շրջանում, ինչի շնորհիվ հայաբնակ շատ կենտրոններում, ավելի ուշ՝ նաև բուն Հայաստանում ուշադրության կենտրոնում են հայտնվում լուսավորության տարածման և կրթության կազմակերպման հարցերը: Արևմուտքի և Արևելքի միջև առևտրում մեծ դեր ունեցող հայ վաճառականների, նրանց հովանավորությամբ Արևմուտքում կրթություն ստացած երիտասարդների միջոցով տեղի էին ունենում մշակութային շփումներ և լուսավորական մտքի շարժ դեպի հայկական միջավայր: Այդ համատեքստում պետք է դիտարկել դպրոցական գործի, այդ թվում՝ օտար լեզուների ուսուցման կազմակերպման նոր մեթոդաբանության կիրառումը հայկական դպրոցներում:

Իրանահայ համայնքում ուսումնական գործընթացի նորացման և հրատարակչական գործի կազմակերպման փորձերը տեսանելի էին XVII դարում Իրանում արդեն ձևավորված հայ համայնքի ուսումնամշակութային կյանքում¹: Պարսկերենին տիրապետելը դեռևս անհրաժեշտ էր բանավոր մակարդակում, առօրեական շփումների նպատակով, և չէր պահանջում գրի իմացություն²: Այս հանգամանքը կարելի է պայմանավորել նաև Իրանի միջնադարյան կենսակերպով և կրթական համակարգի չզոյությամբ: Դրա կարիքն առաջանալու էր երկրի հասարակական հարաբերությունների զարգացմանը զուգընթաց:

Օտար լեզուների ուսուցումն իրանահայատակ հայության շրջանում, որպես դպրոցական ծրագրի մաս, սկսվել է XVIII դարի երկրորդ կեսին և հատկապես XIX դարի սկզբին, ինչի մասին ունենք աղբյուրագիտա-

¹ Ջուղայում առաջին դպրոցի հիմնումը կապվում է թեմի առաջնորդ Խաչատուր Կեսարացու (1590-1646) անվան հետ, որը 1633 թ. Ամենափրկիչ վանքին կից հիմնում է բարձրագույն դպրոց: Այն պատմական որոշ վավերագրերում նաև «համալսարան» է կոչվել (տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, IV հատոր, Եր., 1972, էջ 33): 1638 թ. Խ. Կեսարացին իր սաների հետ հիմնում է նաև տպարան, և Լեռի խոսքերով. «...հայերն էին, որ առաջին անգամ մտցնում էին տպագրությունը շահերի երկիրը» (Լեռ, Հայոց պատմություն, III հատոր, Եր., 1969, էջ 429): Իսկ արևելահայ հրատարակչական գործունեությունն իր հունի մեջ ընկել է միայն XIX դարի սկզբին, երբ Լազարյան ձեմարանին, Ներսիսյան դպրոցին կից և Շուշում հիմնված տպարաններում աստիճանաբար ծավալվում են հրատարակչական աշխատանքներ:

² Արևելյան Այսրկովկասում պարսկերենի տարածվածության և գործածության պատմության ու խնդիրների մասին տե՛ս **Չ. Կիրակոսյան**, Մատենադարանի հայատառ պարսկերեն Ավետարանի ձեռագրերը, Եր., 2020, էջ 54-63, նաև՝ **Չ. Կիրակոսյան**, Պարսկախոսությունը Շիրվանի հայ բնակչության շրջանում (ԺԸ դար), Գիտական Արցախ, № 4(7), Արցախ, 2020, էջ 83-92:

կան վկայություններ և որոշ դպրոցների առարկայացանկերում դրանց ընդգրկվածության մասին տեղեկություններ³: Հարություն Տեր-Յովհանյանցն իր «Պատմութիւն Նոր Ջուղայու որ Յասպահան» աշխատությունում գրում է, որ 1750 թ. մադրասաբնակ Պետրոս Ոսկանյանի ֆինանսական հովանավորությամբ Ջուղայում բացված դպրոցում «եղիցի դասատուութիւն հայերէն, լատիներէն և պարսերէն լեզուաց»⁴: Ըստ նույն պատմագրի՝ 1834 թ. Ս. Ստեփաննոս եկեղեցուն կից բացված դպրատանը «կայր և դասատուութիւն Անգղիական և պարսիերէն լեզուաց, այլ ոչ ոք առաջադիմութիւն արար ինոսա»⁵: 1843 թ. Ջուղայում հիմնված Հայկյան Հայրենասիրական դպրոցում ևս, հայոց լեզվից բացի, դասավանդվել է պարսկերեն⁶, իսկ 1853 թ. Ս. Մինաս եկեղեցու գավիթում հիմնված դպրատանը պարսկերենի ուսուցումն իրականացվել է «այլազգի ուսուցիչների զանցառութեամբ»⁷:

Քննվող Հ^Կ306 ձեռագրի ուսումնասիրությունը թույլ է տալիս փաստել, որ պարսկերենի՝ դասագրքային և կանոնակարգված ուսուցում իրականացրել են հայերը:

1. «Պարսկերէն և հայերէն քերականութիւն» (Ս. Ամենափրկիչ, Հ^Կ306), գրիչ՝ Գեորգ Աւետեան Չաքարեաց Ջուղայեցի, վայր՝ Բատավիբա⁸:

Թեև Իրանի հայկական համայնքի կրթական գործի կազմակերպման պատմության վերաբերյալ շատ է գրվել, սակայն քննարկման ներկայացված Հ^Կ306 «Պարսկերէն և հայերէն քերականութիւն» ձեռագիրը նոր լույս է ափռում մեր հայրենակիցների մանկավարժական մտքի զարգացման, դպրոցական գործի կազմակերպման և օտար լեզուների, մասնավորապես պարսկերենի դասավանդման պատմության ուսումնասիրության վրա: Ի՞նչ էր ավելացնում ձեռագիրը, ինչո՞ւ էր այն կազմվել Բատավիբայում, և ի՞նչ նորությ էր բերում այն իր հետ: Հնդկաստանի ճանապարհով Ինդոնեզիա հասած, անգլիացիների և հոլանդացիների բերած բարձր մշակույթի հետ առնչված նախկին իրանահայերը, բնականաբար, նոր ասելիք ունեին հայրենակիցներին: Նրանք շարունակում էին ջուղայահայերի՝ Արևելքի և Արևմուտքի միջև կապող օղակ հանդիսանալու երբեմնի հարուստ ավանդույթը, հնարավորություն ունեին ա-

³ XIX դարում Նոր Ջուղայի եկեղեցիներում հիմնված դպրատներում, ինչպես նաև քահանաների և մասնավոր անձանց մոտ կրթություն ստացող աշակերտները, գրաճանաչ դառնալուց բացի, ստանում էին ընթերցանության, քերականության և թվաբանության դասեր, սովորում նաև պարսկերեն, սաղմոսներ, ժամգիրք և եկեղեցական երգեցողություն (տե՛ս **Լ. Մինասյան**, Պատմություն Նոր Ջուղայի հայոց ազգային երկսեռ դպրոցների 1880-1985, Նոր Ջուղա, 1985, էջ 57-58):

⁴ **Յ. Տեր Յովհաննես**, Պատմութիւն Նոր Ջուղայու որ Յասպահան, հ. 2, Նոր Ջուղա, 1881, էջ 255:

⁵ Նույն տեղում, էջ 258:

⁶ **Տ. Աբգարեանց**, Նոր-Ջուղայի դպրոցները, Նոր-Ջուղա, 1914, էջ 10:

⁷ **Պ. Պետրոսեան**, Պատմութիւն Նոր Ջուղայի, աշխատասիրած հանգուցեալ պրն. Յարութիւն Թ. Տեր Յովհաննեսնցից, հ. 2, Նոր Ջուղա, 1881, էջ 280:

⁸ Տե՛ս Յուզակ Չեռագրաց Նոր-Ջուղայի Ս. Ամենափրկիչ վանաց թանգարանի, հ. Բ, կազմեց Լ. Գ. Մինասեան, խմբ.՝ Օ. Ս. Եգանեանի, Վիեննա, 1972, էջ 2-3:

զատ հարաբերվելու աշխարհի հետ, փոխառելու նորագույնը, մինչդեռ մայր կենտրոնը, պայմանավորված Իրանի սոցիալ-քաղաքական իրողություններով, պարփակվել էր ինքն իր մեջ և զգում էր օտար ափեր հեռացած հայրենակիցների օգնության կարիքը: Եվ պատահական չէր, որ Գևորգ Ավետյան Չաքարյանցի կազմած ձեռագիր դասագիրքը համապատասխանում է նոր չափանիշներին և կրթական գործի կազմակերպման առաջանցիկ քայլ է ջուղայահայության կրթական կյանքում:

1846 թ. Բատավիայում «ի հայրապետութեան տեառն Ներսէսի եւ յառաջնորդութեան տեառն Յովհաննու Սուրենեանի» գրված ձեռագրի հեղինակի մասին կենսագրական տվյալները հիմնականում վերաբերում են նրա գիտամանկավարժական գործունեությանը: Բացի քննվող ձեռագրից, մեզ են հասել Գևորգ Ավետյան Չաքարյանցի մի քանի այլ երկեր ևս, որոնք վկայում են նրա ժամանակի ուսյալ անձանցից լինելու մասին: Վենետիկում 1845 թ. Չաքարյանցի՝ անգլերենից կատարված թարգմանությամբ հրատարակվել է չինական բարոյախոսական առակների ժողովածու՝ «Տնտեսութիւն մարդկային կենաց» խորագրով⁹, իսկ 1846 թ. Կալկաթայի Հայկյան մարդասիրական ճեմարանի տպարանում՝ նրա «Յանդիմանութիւն անձին» բարոյախրատական բնույթի երկը՝ «ի զբօսանս միայնակեաց անձին իմոյ եւ յօգուտ համարիլն բարեւեր ծաղկափթիթ պարմանեաց»¹⁰: 1852 թ. Կալկաթայի Ազգասեր Արարատյան տպարանում լույս է տեսել «Չավա կամ ընդհանուր ծանօթութիւն բազմակողմ ծովու Արեւելեան Հնդկաց՝ ուր շարժի Հոլանդացոց տէրութիւն» երկը, որում Չաքարյանցը «համառօտիւ առեալ յաշխարհագրութենէ Հնդկաց, Հոլանդացոց... յօգուտ սիրելի ազգի իմոյ»¹¹: Երուսաղեմի Ս. Հակոբեանց տպարանի՝ 1940 թ. հրատարակած գրացուցակում տեղ են գտել Ավետյան Չաքարյանցի ևս երկու աշխատություն՝ «Կարգադրութիւն Առողջութեան»¹² և «Մարգարեական Յարակցութիւն ընդ մէջ Հին եւ նոր Կտակարանաց»¹³ խորագրերով:

Հ^մ306 ձեռագիրը Ավետյան Չաքարյանցը գրել է Բատավիայում՝ Բնդունեգայի ներկայիս մայրաքաղաք Չակարտայում¹⁴, որտեղ հայերը

⁹ Տե՛ս «Տնտեսութիւն մարդկային կենաց, Խրատք պիտանիք, թարգմանեալքի Սինեացոց լեզուէ հանգղիական բարբառ փոխեաց ի մերս **Գևորգ Աւետ Չաքարեան**, Ջուղայեցի ի Պաթալիա, ի Վենետիկ», 1845, 76 էջ (http://greenstone.flib.sci.am/gsd/collect/armbook/books/tntesutyun_kenac1845.pdf)

¹⁰ **Գ. Աւետեան Չաքարեանց**, Յանդիմանութիւն անձին, Կալկաթա, 1846, 53 էջ (http://greenstone.flib.sci.am/gsd/collect/armbook/books/Jandimanutin_anzin_1846.pdf)

¹¹ **Գ. Աւետեան Չաքարեանց**, Չավա կամ ընդհանուր ծանօթութիւն բազմակողմ ծովու Արեւելեան Հնդկաց՝ ուր շարժի Հոլանդացոց տէրութիւն, Կալկաթա, 1852, 339 էջ (<http://greenstone.flib.sci.am/gsd/collect/haygirq/book/java1852.pdf>)

¹² **Գ. Աւետեան Չաքարեանց**, Կարգադրութիւն Առողջութեան, Յերուսաղեմ, 1871, 262 էջ:

¹³ **Գ. Աւետեան Չաքարեանց**, Մարգարեական Յարակցութիւն ընդ մէջ Հին եւ նոր Կտակարանաց, Յերուսաղեմ, 1875, 83 էջ:

¹⁴ Բատավիան Բնդունեգայի ներկայիս մայրաքաղաք Չակարտայի հին անվանումն է, որը մինչև 1527 թ. կոչվել է *Մունդա Կելապա*, այնուհետև, մինչև 1619 թ. *Չայկարտա*, իսկ մինչև 1942 թ. Բատավիա: Նախկինում *Sunda Kelapa* անունը կրող այս քաղաքը 1527 թ. պորտուգալացիների հաղթանակից հետո վերանվանվել է *Չայկարտա*

գաղթել են XVII դարում հիմնականում Նոր Ջուղայից և Հնդկաստանից, մասնավորապես Մադրասից: Արևելյան այս երկրներում հաստատված իրանահայերն ամուր կապով միշտ կապված են մնացել համայնքի հետ, նյութական միջոցներով օժանդակել հայրենակիցներին դպրոցներ հիմնելու, դրանք պահելու հարցերում, ինչպես նաև հայրենակիցներին են փոխանցել տեղացի ժողովուրդներից փոխառած ուսումնա-դաստիարակչական առաջավոր մեթոդները:

Ավետյան Ջաքարյանցը ձեռագրի առաջաբանում թողել է հետևյալ տեղեկությունները. «Պարտիք ազգասիրութեան ի վաղնջուց ստիպէր զիս առ այս գործ, որ կոչի՝ Պարսկերէն եւ հայերէն քերականութիւն, բայց եւ կարծիք մի անգէն խափան առնէր զայս ստիպողութիւն մինչև ցայս վայր: Այս է ընդունեայն վաստակն եւ անօգուտ ջանն, զոր յայսմ առնել ունէի: Քանզի յառաջ քան զայս յազգ մեր հազիվ գտանիր ոք, որ ցանկայր ուսանել զգիր Պարսիցոց: Այլ այժմ լսեմք, զի խնամօք ամենավեհին յերկրորդ հայրենիս մեր ի Նոր Ջուղա, ի ձեռն խոհական եւ քաջ հովուաց հաստատեալ են երէք դպրոցք, յորս մանկունք սիրելի ազգի մերոյ բացի հայերէնն, ուսանեն նաեւ զպարսկերէն»¹⁵:

Գրչի այս բացատրություններից կարելի է եզրակացնել, որ հայ մանուկները մինչ այդ չեն ցանկացել սովորել պարսկերէն: Խնդիրը հավանաբար արաբատառ գրի դժվարություններն էին, կամ այն կյանքին ծառայեցնելու անհրաժեշտության պակասը: Սակայն փոխվում են իրողությունները, քրիստոնեական և իսլամական աշխարհների հարաբերությունները, նորովի է դիտարկվում համայնքի դերն Իրանի հասարակական կառույցում, և պարսկերէնի գրագետ իմացությունը դառնում է հրամայական¹⁶: Բաֆֆին, որը նույն շրջանում դասավանդել է Թավրիզի

(սանսկրիտ՝ *Jaya Krta*՝ հերոսական արարք): 1619-1621 թթ. Ջայակարտա հին քաղաքի տեղում կառուցվել է Բատավիան՝ որպես Ասիայում նիդեռլանդական տիրապետության տակ գտնվող տարածքների վարչական կենտրոն, և կոչվել հին գերմանական բատավների ցեղի անունով, որոնք Հռոմեական կայսրության շրջանում բնակվում էին Հոլանդիայի տարածքում: Արդեն XIX դարի 50-ական թթ. հայերը Բատավիայում կառուցում են եկեղեցի, բացում նաև հայկական դպրոց՝ «Մանուկ և Հարությունյան ուսումնարան» անվամբ: Բատավիայի մասին հիշատակումներ հանդիպում ենք նաև Կ. Ջուղայեցու «Աշխարհաժողովում» (տե՛ս Կ. Ջուղայեցի, Աշխարհաժողով, աշխ. Ս. Բալթարյանի, Եր., 2021, էջ 105, 116, 185): Բատավիայի մասին տե՛ս նաև Ռ. Աբրահամյան, Ինդոնեզիայի հայ գաղթօջախների պատմությունից, ՊԲՀ, հ. 1, Եր., 1992, էջ 33-41:

¹⁵ Գ. Աւետեան **Ջաքարեանց**, Պարսկերէն եւ հայերէն քերականութիւն (Ս. Ամենափրկիչ, Հ⁴:306), Բատավիա, 1846, էջ 3:

¹⁶ Հատկանշական է, որ այդ շրջանում Կ. Պոլսում, Թեհրանում և Լոնդոնում արևելյան լեզուներով հրատարակվող մամուլի էջերում բուռն վեճեր էին ընթանում պարսկերէն գիրը բարեփոխելու ուղիներ գտնելու հարցի շուրջ, քանի որ ժամանակի առաջադեմ մտավորականության համոզմամբ՝ իսլամական ժողովուրդների հետամնացության գլխավոր պատճառներից էր նաև արաբատառ գիրը: Ըստ իրանցի հետազոտող Ֆերեշթե Նուրայիի հայազգի անվանի հասարակական-պետական գործիչ, գրող Մելքոն խանը (1833-1908), փորձելով բարեփոխել պարսկական գիրը, ստեղծել է պարսկերէնի «*մայքոմյան*» կոչվող այբուբենը, որը, խարսխված լինելով արաբական գրի վրա, գրվում էր ոչ թե աջից ձախ, այլ ձախից աջ: «*Մայքոմյան*» այբուբենում ներառված են եղել նաև պարսկերէնի բոլոր չգրվող ձայնավորները, և տառերը գրվել են ոչ թե իրար կցված, այլ անջատ, որը, ըստ հեղինակի,

Արամյան դպրոցում և ի մոտո ծանոթ էր ժամանակի կրթության և մանկավարժության խնդիրներին, իր «Պարսկական նամակներում» գրում է. «Պարսիկները այժմ սեփական տառեր չունին, նրանք գործ են ածում արաբական տառեր, որի թե գրության ձևը և թե՛ կարդալու դժվարությունն ամբողջ տարիներով մաշում է խեղճ երեխաներին, մինչև որ նրանք կարողանում են հասարակ ընթերցանությունը սովորել: Երեխան, մի քանի տարի չարչարվելով, հազիվ ուսանում է ընթերցանությունը, այն էլ գրության մի քանի ձևերով միայն, որովհետև գրության ձևերն այնքան շատ են, որ ամբողջ կյանքում պետք է սովորել»¹⁷:

Գուցե այս խնդրով պայմանավորված՝ «պարսկերենի մեջ առաջադիմելը» խնդիր է եղել նաև հայ մանուկների համար՝ չմոռանալով նաև կրոնական գործոնը, քանի որ արաբական այբուբենը ընկալվել է որպես իսլամի սուրբ գրքի՝ Դուրանի լեզվի գիր և հայերի համար ոչ անհրաժեշտ¹⁸: Կարծում ենք, որ այդ շրջանում հայկական դպրոցներում ուսուցման և տրվող գիտելիքների ցածր մակարդակի պատճառ կարող էր լինել նաև պատաստված ուսուցիչների և ուսումնական ձեռնարկների բացակայությունը:

Սույն ձեռագրի գոյությունը խոսում է XIX դարում իրանահայության կրթական կյանքում ի հայտ եկած նոր մարտահրավերների մասին: Երկիրը զարգանում էր, և հայ քաղաքացին այլևս կարիք ուներ ինտեգրվելու Իրանի հասարակական-տնտեսական, պետական և մշակութային կյանքին, ինչը պահանջում էր պարսկերենի գրագետ իմացություն: Պարսկերեն գրի ուսուցումը, ինչպես նկատում է Բաֆֆին, «պարսկահայության համար, որ անազատ պայմաններում մեկուսացած, նեղ համայնքային կյանքով էր ապրում և մի կերպ խղճուկ գոյություն պահպանում», կարող էր դառնալ միջոց՝ երկրի ներքին կյանքին առավել գործուն մասնակցություն ունենալու, նաև համայնքի իրավունքները ներկայացնելու ու պաշտպանելու համար¹⁹: Մարդն այլևս ուզում էր լինել տվյալ պետության և համաշխարհային քաղաքակրթության մի մասնիկը: Պատահական չէ, որ պատմական նոր իրողությունները պահանջ էին առաջադրել ստեղծել ժամանակի ոգուն համապատասխան

«ժամանակի հետամնաց Պարսկաստանում» պետք է նպաստեր տպագիր խոսքի զարգացմանը, գրագիտության տարածմանն ու մշակույթի վերելքին, (տե՛ս **Ferešte Nurāyi**, tahyiy dar afqār-e Mirzā Malqom Xān Nāzemaddovle, Tehrān, 1352/1973, էջ 104):

¹⁷ **Բաֆֆի**, Երկերի ժողովածու, հ. 10, Եր., 1959, էջ 612-613:

¹⁸ Հայոց եկեղեցու դիմակայումը հավատափոխության գործընթացներին հատկապես դժվար է եղել մուսուլմանական իշխանության տակ ապրող հայադավան համայնքներում: Իրանի հայ բնակչությանը մահմեդականացնելու քաղաքականության մեջ Սեֆյանները կիրառում էին երեք հիմնական մեթոդ՝ ուժային կամ բռնի, տնտեսական և քարոզչական: Հայ եկեղեցու կողմից սխտրաստիկ, վիճաբանական գրականության, նաև սուրբ գրությունների պարսկերեն թարգմանությունների ստեղծման հովանավորումը պայմանավորված էր պարսկախոս հայ քրիստոնյա բնակչության գոյությամբ և նպատակ ուներ քրիստոնեական գիտելիքի շրջանառության միջոցով ամրապնդել հայ համայնքի կրոնական ինքնությունը (այդ մասին մանրամասն տե՛ս **Զ. Կիրակոսյան**, Մատենադարանի հայատառ պարսկերեն Ավետարանի ձեռագրերը, էջ 63-103):

¹⁹ **Բ. Զուգասյան**, Բաֆֆին պարսից մշակույթի և գրականության մասին, ԼՀԳ, №1, 1987, էջ 19-20:

դպրոցներ, որոնցում կկիրառվեին ուսուցման առաջադեմ մեթոդներ: Աշխարհի տարբեր անկյուններում ապրող ջուդայեցի մեկենասների շնորհիվ հիմնված աշխարհիկ դպրոցներում կարևորվում էր նաև լեզուների ուսուցումը: Ձեռագրի՝ Բատավիայում գրված լինելու փաստն ինքնին հուշում է ինդոնեզահայության՝ հոլանդացիների հետ շփման արդյունքում ունեցած կրթական առավել առաջադեմ մեթոդների մասին, ինչը նրանք ցանկանում էին փոխանցել հայրենի Ջուդա:

2. Ձեռագրի կազմման մեթոդաբանությունը:

«Պարսկյերէն եւ հայերէն քերականութիւն» ձեռագրում քերականությունը գրված է պարզ ու մատչելի, զուրկ երկարաշունչ նկարագրություններից, սահմանումները սեղմ են՝ էական դիտված մի քանի հատկանիշների հիմքով: Հեղինակն այն երբեմն հասցրել է պարզունակության աստիճանի՝ հավանաբար հաշվի առնելով հանգամանքը, որ ուսումնական ձեռնարկ է կազմում:

Ձեռագիր դասագիրքը կազմելիս թե ինչ աղբյուրներից է օգտվել հեղինակը, դժվար է կռահել, քանի որ XIX դարի առաջին կեսին Նոր Ջուդայի դպրոցներում, բացի կրոնից և հայագիտական մի շարք առարկաներից, մյուս գիտությունների գծով գրեթե չեն եղել ուսումնական գրքեր²⁰: Եթե փորձենք ենթադրել, որ նա ձեռքի տակ ունեցել է պարսկերենի քերականության վերաբերյալ աշխատություններ, ապա դրանք պետք է լինեին մինչև XVIII դարը պարսից լեզվի քերականությունն ամփոփող *Ֆարհանգները*՝ երկլեզու բառարանները, որոնք միջնադարյան կրթական համակարգում պարսկերեն ուսուցանելու յուրահատուկ գործիքներ էին²¹: Օսմանյան կայսրությունում (XIII-XIV դարերից սկսած), ավելի ուշ նաև Հնդկաստանում (XVII դար) մշակութային և ուսումնական նպատակներով ստեղծված այս ուսումնակրթական, թարգմանական-բացատրական բնույթի երկերում պարսից լեզվի քերականությունն իր կառուցվածքով, քերականական տեր-

²⁰ Առաջին տպագիր դասագիրքը Նոր Ջուդայում լույս է տեսել 1872 թ.՝ Մանուկ Հորդանանյանի՝ Սուրբ Ամենափրկիչ վանքին նվիրված աշխատանքի (մամուլի) հիման վրա (**Տ. Աբգարյան**, Նոր-Ջուդայի դպրոցները, էջ 24, տե՛ս նաև **Լ. Մինասյան**, նշվ. աշխ., էջ 58): Գիրքը կոչվում էր «Այբբենարան ի պետս մանկանց»: Այս դասագրքով աշակերտները նախ սովորում էին վանկեր, հետո դրանցով կազմում էին բառեր և ապա նախադասություններ: Բնականաբար, ուսուցումն սկսվում էր միավանկ բառերից և աստիճանաբար ավելանում: 1873 թ. Նոր Ջուդայում տպագրվում է երկրորդ դասագիրքը՝ «Միականոն Սաղմոս Դաւթի կամ հեգարան ի պետս մանկանց» վերնագրով: Մինչև 1880-ական թթ. Նոր Ջուդայի դպրոցներում կիրառվող դասագրքերի թվում էին 1. «Համառոտ պատմութիւն հայոց» (1877 թ.), 2. «Հավատապատում, այն է մանր ուսմունք քրիստոնէական հաւատոյ» (1877 թ.), 3. Արսեն Բագրատունու «Տարեք հայերէն քերականութեան» (1878 թ.), 4. «Համառոտ պատմութիւն Սուրբ գրոց ի պետս դպրոցաց» (1879 թ.), 5. «Հրահանգ քրիստոնէական հավատոյ, ըստ ուղղափառ դաւանութեան եկեղեցոյ Հայաստանեայց» (1879 թ.) (տե՛ս **Լ. Մինասյան**, նշվ. աշխ., էջ 61): Ավելի ուշ՝ դպրոցների միավորումից հետո, մի շարք դասագրքեր բերվում են Կովկասից, մասնավորապես Թիֆլիսից:

²¹ Տե՛ս **Կ. Կիրակոսյան**, **Ա. Մարգարյան**, Միջնադարյան պարսկերեն-օսմաներեն երկլեզու բառարանները որպես կրթական գործիքներ (ըստ Մատենադարանի արաբատար ձեռագրաֆոնդի ուշմիջնադարյան պարսկերեն-օսմաներեն բառարանների), Հայագիտության հարցեր, № 2 (11), Եր., 2017, էջ 39-47:

միններով հիշեցնում է արաբերենի քերականությունը: Ուստի դժվար թե դրանք հիմք դառնային նորամեթոդ դասագրքի համար: Քննվող ձեռագրում գրիչը պարսկերենի քերականությունը շարադրել է՝ ելնելով ոչ թե բառերը ըստ խոսքիմասային պատկանելության՝ անվանական (*asāmī*) և անորոշ դերբայական (*mašadir*) առանձնացնելու սկզբունքից, որն ընդունված էր երկլեզու ուսումնական բառարանագրության մեթոդաբանության մեջ²², այլ այն համապատասխանեցրել է հայերենի քերականությանը: Ավելին՝ ձեռագրում պարսկերենի քերականությունն իր կառուցվածքով հիշեցնում է հունալատինաստիպ քերականությունները, որոնք ավանդաբար բաղկացած են քերականության չորս բաժնից՝ գիր («horuf»), վանկ («hejā»), բառ («kalām»), բան («kalame»): Սա հայերենի զարգացման այն շրջանն էր, երբ քերականությունն առանձնանում է փիլիսոփայությունից և բանասիրությունից, և խոսքի մասերի սահմանման հիմքեր են դառնում մի կողմից բառերի իմաստային (նյութական), մյուս կողմից՝ քերականական (գործառական) հատկությունների ընդհանրությունները: Ձանազանվում են թեքվող և չթեքվող խոսքի մասերը, տարբերակվում *խոսքի մաս* և *նախադասության անդամ* հասկացությունները:

Հատկանշական է, որ արաբերենի քերականական համակարգից պարսկերենն առանձնացնելու և այն գուտ որպես լեզվաբանության առանձին ճյուղ դիտարկելու պատմությունը կապվում է Միրզա Հաբիբ Իսֆահանիի անվան հետ, ով 1872 թ. գրել է «Լեզվի քերականություն» («Dastur-e soxan») աշխատությունը՝ հիմքում ունենալով արևմտյան, մասնավորապես ֆրանսիական քերականական դպրոցի փորձը²³: Ստանբուլում հաստատված իրանցի գիտնականը, դասավանդելով արաբերեն և պարսկերեն, նաև ծանոթանալով ֆրանսերենին և թուրքերենին, զգում է պարսկերենի քերականության դասագիրք ունենալու անհրաժեշտությունը: Այս աշխատությամբ Էսֆահանին առաջինն էր, որ դասակարգեց պարսից քերականական խոսքի մասերը՝ առանձնացնելով 10-ը²⁴, ի տարբերություն անցյալի փորձի, երբ վերլուծություններ արվում էին երկու հիմնական անդամների՝ անվան և բայի շուրջ: Խոսքը պարսից դպրության մասին է, քանի որ Արևմուտքում արդեն տպագրվում էին պարսկերենի քերականության գրքեր: 1771 թ. բրիտանացի արևելագետ Վիլյամ Ջոնսի հեղինակությամբ հրատարակվել էր «Պարսից լեզվի քերակա-

²² Քերականական նյութի ընդգրկումը պարսկական ֆարհանգներում սկզբնավորվել է XI դարից: Դրա առաջին նմուշն է *Farhang-i Ja' farī* -ն (1040/1630-31 թթ.):

²³ Տե՛ս **Сухоруков А. Н., Сухорукова А. Б.** История изучения грамматики персидского языка в Иране и сопредельных с ним странах до конца 19 века, «Филология. Социальные коммуникации», том 25 (64), № 3, ч. 1, 2012 թ., էջ 276:

²⁴ Էսֆահանին ավելացրել է նաև անորոշ դերանունը (*kenāyāt*) և բայից կախյալ խոսքի մասերը («зависимые от глагола части речи» (*far-efe'ī*), սակայն չի պահպանել պարսկերենին ոչ բնորոշ հոդը, ինչի արդյունքում ստացվել է 10 խոսքի մաս: Էսֆահանին է իրանական լեզվաբանություն ներմուծել այնպիսի եզրույթներ, ինչպիսիք են հասարակ անուն (*esm-e ām*), հատուկ անուն (*esm-e xās*), թանձրացական գոյական (*esm-e jens*), ածանցավոր գոյական (*esm-e moštaq*) (Տե՛ս **Сухоруков А. Н., Сухорукова А. Б.**, նշվ. աշխ., էջ 277):

նություն» գրքի առաջին հրատարակությունը²⁵:

Եթե փորձենք ձեռագիր ուսումնական ձեռնարկը համեմատել նույն ժամանակաշրջանում իրանցիների համար գրված պարսկերենի դասագրքերի հետ, ապա պետք է նկատի ունենալ այն հանգամանքը, որ բուն իրանական աշխարհիկ տիպի դպրոցները հիմնադրվել են հիմնականում XIX դարի 70-ական թվականներին, իսկ ներկայացվող ձեռագիրը 1846 թ. արդեն կիրառում է պարսկերենի քերականության դասավանդման նոր մոտեցում: Մինչ այդ կրթությունը սխոլաստիկ բնույթ ուներ, որի հիմքում ընկած էր աստվածաբանությունը: Կրթական գործն ամբողջությամբ գտնվում էր իսլամական հոգևորականության ձեռքում. դասավանդվում էին Ղուրան, ֆիկհ, շարիաթ, հադիսներ, գրականություն, աշխարհագրություն և թվաբանություն: Պատմություն և աշխարհագրություն դասավանդվում էին իրանցի և արաբ միջնադարյան հեղինակների ստեղծագործություններով, իսկ գրականության դեպքում՝ պարսկալեզու դասական հեղինակների ստեղծագործություններն անգիր անել տալով:

XIX դարի երկրորդ կեսին իրանական առաջադեմ հասարակության ներկայացուցիչները, լինելով եվրոպական երկրներում և Ռուսաստանում, ծանոթանալով այդ երկրների կրթական գործին, հանդես են գալիս միջնադարյան սխոլաստիկ կրթությունը նորով փոխարինելու պահանջով: Նրանք սկսում են լայնորեն քննարկել կրթության «եվրոպականացման» հարցը: Առաջ են քաշվում աշխարհիկ բնույթի դպրոցների ցանցի և դասագրքերի ստեղծման հարցեր:

Մեզ հասած պարսկերեն առաջին դասագիրքը՝ «Naxostnāme»-ն, հրատարակվել է 1905 թ. Իրանի կրթության նախարարության կողմից և նախատեսված է եղել տարրական դպրոցի աշակերտների համար²⁶, ինչն ինքնին փաստում է Հ^մ306 «Պարսկերեն եւ հայերեն քերականութիւն» ձեռնարկի առաջանցիկությունն այս ասպարեզում: Վերոհիշյալ երկհատոր դասագրքի հեղինակը հայազգի գրող, թարգմանիչ Մաթեոս Խան Մելիքյանցն էր, որն ուսուցչական աշխատանքից գատ, բարձր պաշտոններ է զբաղեցրել Իրանի պետական կառավարման համակարգում:

Ի տարբերություն ձեռագիր ուսումնական ձեռնարկի, որում առավելապես շեշտադրված են լեզվի ուսուցման տեսական գիտելիքները՝ «Naxostnāme»-ում պարսկերենի ուսուցումն արդեն կենտրոնանում է գործնական գիտելիքների վրա՝ ընդգրկելով նաև ուսումնառության նյութեր, որոնք լրացված են թեմատիկ նկարներով և գործնական առաջադրանքներով: Մեթոդի նման փոփոխությունը պատահական չէր, քանի որ այդ դասագիրքը գրված էր ֆրանսիական ուսումնական ծրագրերի օրինակով:

Հաշվի առնելով Հ^մ306 «Պարսկերեն եւ հայերեն քերականութիւն» դասագրքի կազմության ժամանակաշրջանը՝ առավել նկատելի է դառ-

²⁵ Տե՛ս **William Jones**, A Grammar of the Persian Language, London, 1771, 232 էջ:

²⁶ Դասագրքի առաջին հատորը լույս է տեսել 1905 թ., իսկ երկրորդը՝ 1908 թ.:

նում հայ համայնքի և իրանական պետական դպրոցի միջև եղած ժամանակային և դրանից բխած մեթոդական խզումը՝ հոգուտ հայկականի:

Հայերին պարսկերեն ուսուցանելու համար կազմված դասագրքերից ուշագրավ է Մոսկվայի Լազարյան ճեմարանի և Թիֆլիսի Ներսիսյան դպրոցի փորձը: Սակայն, քանի որ դա դուրս է մեր հողվածի բուն նպատակից, միայն հակիրճ նշենք, որ իրանահայ դպրոցների ուսումնական ծրագրերին անդրադառնալիս անհնար է չառնչվել կովկասահայ և ռուսահայ իրականության մեջ լուսավորության ջանք կրած այդ կրթօջախների ուսումնական ծրագրերին և գործունեությանը:

Լազարյան ճեմարանում պարսից լեզվի ուսուցումը սկսվել է ուսումնական հաստատության հիմնադրման առաջին իսկ օրվանից և կապվում է Հովակիմ (Միքայել) վարդապետ Սալանթյանի անվան հետ, որը հայագիտական առարկաներից բացի, դասավանդել է նաև թուրքերեն, արաբերեն և պարսկերեն²⁷: 1825 թ. Ներսիսյան դպրոցի տեսուչ Հ. Ալամդարյանի կազմած «Ցուցակ պարտավորութեանց վարժապետաց» վերնագրով կանոնադրության մեջ դասավանդվելիք առարկաների թվում ներառված են նաև պարսկերեն ընթերցանություն, վալեյազրություն և քերականություն²⁸:

Լազարյան ճեմարանում պարսկերենի ուսուցման համար կիրառվել են Բոլդիբևի «Պարսից քրեստոմատիա», Ի. Բերեգինի «Պարսից լեզվի քերականություն» և Ոսկան Իոնիսյանցի «Պարսից լեզվի դասագիրք» ռուսալեզու ձեռնարկները²⁹: Որոշ ուսումնասիրողներ նշում են նաև «Պարսից լեզվի համառոտ քերականություն» աշխատությունը՝ գրված 1841 թ. Թիֆլիսում կովկասաբնակ մուսուլման զինվորական Աբբասդուլի խան Բաքիխանովի կողմից³⁰: Ենթադրվում է նաև, որ ճեմարանում հայ սաների համար որպես դասագիրք ծառայել է նաև Գևորգ դպիր Պալատացու «Պարսկերեն-հայերեն» բառարանը՝ գրված 1826 թ. Կ. Պոլսում:

Այս դասագրքերի և Հ⁴306 «Պարսկերեն և հայերեն քերականություն» ուսումնական ձեռնարկի քննությունը ցույց է տալիս, որ Ջուղայի դպրոցների համար գրված ձեռնարկն իր մեթոդաբանությամբ քիչ է տարբերվում Լազարյան ճեմարանում պարսկերենի ուսուցման համար ընդունված մոտեցումներից: Երկու դեպքում էլ լեզվի ուսուցումը հիմնվում է քերականական գիտելիքների վրա, որպես օրինակներ բերվում են հատվածներ պարսից դասական պոեզիայից: Դասապրոցեսում մեծ տեղ է հատկացվում բառարաններին, որտեղից քաղվում էր լեզվի հիմնական բառապաշարը:

²⁷ Տե՛ս **Меликян Г., Хромов А.** История преподавания персидского языка в Лазаревском институте восточных языков, ԲԵՀ, № 1(67), Եր., 1989, էջ 189:

²⁸ **Մ. Սանթրոսյան**, Արևելահայ դպրոցը 19-րդ դարի առաջին կեսին, Եր., 1964, էջ 386:

²⁹ Բոլդիբևի «Պարսից քրեստոմատիա»-ն հրատարակվել է 1826 թ. և ընդգրկում է երկու բաժին՝ պոեզիա և արձակ: Այդ դասագիրքը վերահրատարակվել է 1834 թ., որին ավելացվել է երրորդ մասը՝ պարսկերենի բառարանը: Ի. Բերեգինի հեղինակմամբ «Պարսից լեզվի քերականություն» ուսումնական ձեռնարկը լույս է տեսել 1853 թ., իսկ Ոսկան Իոնիսյանցի «Պարսից լեզվի դասագիրքը»՝ 1856 թ.:

³⁰ Տե՛ս **Меликян Г., Хромов А.**, նշվ. աշխ., էջ 190:

Բատավիայում գրված ձեռնարկը ստեղծվել է ավելի վաղ, քան քերականության վերոնշյալ դասագրքերը: Լագարյան ձեռնարանում Ստեփան Լագարյանցի՝ պարսկերեն դասավանդելու մասին նրա ուսանողներից Կուչուկ Իռաննեստվը գրում է, որ առաջին կուրսում չկային ձեռնարկներ, ինչի պատճառով պրոֆեսորը տրսնջում էր: Այդ պատճառով նա ստիպված էր լինում թելադրել քերականությունը, իսկ ընթերցանության տեքստերը՝ գրել գրատախտակին: «Մենք արտագրում էինք, բարձր կարդում, իսկ ձեռագրագիտության օրինակներ պրոֆեսորը գրում էր մեր տետրերում, որպեսզի գրելով վարժվենք: Արդեն 2-րդ և 3-րդ կուրսերում հայտնվել են Բոլդիբևի «Պարսկերենի քրեստոմատիա»-ն և Սաադիի «Գուլեստան»-ը: Այն կարդալիս օգտվում էինք Լագարյանցի կողմից թարգմանված ռուսերեն օրինակից»³¹, - եզրափակում է Իռաննեստվը:

2.1. Սաադիի «Գուլեստան» ստեղծագործությունը ձեռագիր դասագրքում:

Ինչպես արդեն նշեցինք, Սաադիի «Գուլեստան»-ի 8-րդ գլխի հայերեն թարգմանությունն ընդգրկված է նաև քննվող ձեռագրում: Հայտնի է, որ մեծամուն իրանցու այս ստեղծագործությունը ողջ միջնադարում ծառայել է որպես պարսից լեզվի դասագիրք ոչ միայն Իրանում, այլև Օսմանյան կայսրությունում, Հնդկաստանում, գրեթե ողջ իսլամական աշխարհում, անգամ Եվրոպայում³²: Չինաստանում XIV-XVI դարերում մուսուլման չինացիները մզկիթներում սովորում էին պարսկերեն՝ կարդալով Սաադիի «Գուլեստանը»: Ավանդույթ, որը պահպանվել է մինչև XX դարը³³:

Սաադիի «Գուլեստան»-ը ուսումնական նպատակով օգտագործելը կարող էր պայմանավորված լինել ստեղծագործության մի շարք առանձնահատկություններով. երկն ունի դիդակտիկ, բարոյախրատական բովանդակություն, գրված է հանգավորված արձակով՝ *սաջուլ*, որի դեպքում արձակ պատմությունները միահյուսված են չափածոյով, շեշտվում են նաև մարդու բարոյական նկարագրի հղկման խնդիրները:

Միջնադարյան մեր ձեռագրերում (XV դ.) պահպանված սուղ տվյալները ևս վկայում են, որ Հայաստանում նույնպես ծանոթ են եղել Սաադիի ստեղծագործություններին: Ասվածը փաստում է նաև «Գուլեստան»-ից հայատառ պարսկերեն հիշատակումները Ղուկաս Վանանդեցու երկու գրքում (1702 թ., 1704 թ.) և Պետրոս Քյութարին վերագրվող Սաադիի քառյակի թարգմանությունը³⁴: Սակայն XIX դարում Գևորգ դպիր Պալատացու կազմած, Կոստանդնուպոլսում հրատարակված պարսկե-

³¹ Նույն տեղում, էջ 192:

³² Այդ մասին առավել մանրամասն տե՛ս **P. Babinski**, Ottoman Philology and the Origins of Persian Studies in Western Europe: The Gulistān's Orientalist Readers, 2019 (https://www.academia.edu/44391106/Ottoman_Philology_and_the_Origins_of_Persian_Studies_in_Western_Europe_The_Gulist%C4%81n_s_Orientalist_Readers), նաև **Munir Drkić**, "Caught between Two Empires: The Teaching of Persian in Bosnia at the Time of Transition from Ottoman to Austro-Hungarian Rule", *Diyār* 2/2, 2021, էջ 186-207:

³³ Տե՛ս **Ходжамуродова Ш.** Особенности изучения и переводы «Гулестан»-а Саади в Китае, автореферат, Душанбе, 2020, էջ 5:

³⁴ Տե՛ս **Մինասյան**, Պարսկական դասական քնարերգությունը հայերեն, ԼՀԳ, հ. 4, 1991, էջ 36-37:

րեն-հայերեն բառարանում Սաադիի ստեղծագործությունից մեջբերված հատվածները բանաստեղծի՝ առայժմ մեզ հայտնի հայերեն ամենավաղ տպագիր թարգմանություններն են³⁵:

Ձեռագիր ուսումնական ձեռնարկում հեղինակի կողմից «Գոլեստան»-ի 8-րդ գլխի թարգմանությունը դասագրքում ներառելը կրկին վկայում է այս ստեղծագործության ուսումնադաստիարակչական նշանակության և իրանական միջավայրում հայերի ընդհանուր աշխարհայացքային խնդիրների մասին:

Եզրակացություններ:

XIX դարում Նոր Ջուղայի հայության շրջանում ներմուծվում է կրթական գործի կազմակերպման նոր մեթոդաբանություն, մասնավորապես օտար լեզուների ուսուցման, որի մաս էր կազմում նաև պարսկերենը: Հ^Գ306 «Պարս[կ]երեն եւ հայերեն քերականութիւն» ձեռագիրը փաստում է, որ հայերի կողմից պարսկերենի դասագրքային կանոնակարգված ուսուցումը XIX դարի առաջին կեսին ներմուծվել է իրանահպատակ հայության միջավայր, որով նոր հիմքի վրա է դրվել պարսկերենի ուսուցումը: Եվ այս ձեռագիրը նաև թույլ է տալիս խոսել պարսկերենի ուսուցման դասագրքերի կազմման պատմության մեջ հայերի ունեցած առաջատար դերի մասին:

АСТХИК ГЕГАМЯН – Из истории учебников, составленных для обучения армян персидскому языку (согласно рукописи – "Персидская и армянская грамматика")*. – Начавшаяся среди персидских армян в XVI-XVII вв. народно-просветительская работа и книгопечатание ознаменовались также возрождением арменоведения, направленного на сохранение национальной, религиозной и культурной самобытности персидских армян в персидско-говорящей среде. Армяне, живущие на границах персидского владычества, были вынуждены овладеть разговорным персидским языком для повседневного общения. Позднее становится актуальным и знание письменного персидского языка, о чем свидетельствует единственный документ-рукопись, хранящийся в скриптории монастыря Св. Всеспасителя в Новой Джульфе - № 306 «Персидская и армянская грамматика». Рукопись была составлена в 1846 году в Батавии «под руководством Иоанна Суреняна и патриарха Нерсеса», писцом является «Геворг Аветян Закарьянц Джугаеци (из Джульфы)». Во введении информация, оставленная Геворгом Аветяном Закарьянцем, свидетельствует о том, что в XIX веке среди армян, находившихся под персидским владычеством, появились совершенно новые требования к использованию персидского языка. Мы читаем: «Моя вторая родина, наша Новая Джульфа, под разумным руководством отважных вожаков основали три школы, где дети нашего любимого народа будут изучать не только армянский язык, но и персидский язык».

Рукопись № 306 «Персидская и армянская грамматика» включает в себя персидскую грамматику, поэтическое стихосложение, персидско-армянский словарь,

³⁵ Տե՛ս **Բ. Չուգասյան**, Հայ-իրանական գրական առնչություններ (V-XVIII դդ.), Եր., 1963, էջ 200:

* Исследование выполнено при финансовой поддержке Комитета по науке МОНКС РА в рамках научного проекта № 21Т-6В125. Результаты исследования были представлены в качестве материала конференции на 8-й Молодежной конференции, прошедшей в Матенадаране 1-3 декабря 2022 года.

перевод 8-й главы «Гулистана» Саади и оглавление. Примечательно, что рукопись начинается с обучения персидскому алфавиту, и ее можно считать комплексным пособием по обучению персидскому языку.

В статье на основе дошедших до нас рукописных учебников и предметных указателей становится возможным определить период становления арабского письма и письменного персидского языка частью образовательного процесса среди армян. Анализ представленного в рукописи материала и способа его изложения также показывает методику преподавания письменного персидского языка среди персидских армян, сравнивая ее с другими учебниками персидского языка, созданными для местных жителей в тот же период. Изучая содержание рукописи, важно также понять, какую роль выполнял отрывок из поэмы «Гулистан», включенный в учебник, в образовательной работе в армянской среде.

Ключевые слова: *Грамматика, рукопись, учебник, словарь, школа, письменный персидский, арабское письмо, литературный памятник, Голестан*

ASTGHİK GEGHAMYAN - *From the History of the Textbooks Compiled to Teach Persian Language to Armenians (The Manuscript "Persian and Armenian Grammar")*. - Among Iranian Armenians in the 16th-17th centuries, the revival of the Armenian school, which aimed to preserve the national, religious, and cultural identity of the Armenians in a Persian-speaking environment, also characterized national education and printing. Armenians living on the borders of the Iranian regime were forced to master spoken Persian due to the need for daily communication. Later, knowledge of written Persian also became relevant, as evidenced by a unique manuscript number 306 "Persian and Armenian Grammar" preserved in the scriptorium of Amenprakhich Monastery of Saint New Julfa. It was written in 1846. In Batavia, led by Patriarchate Father Nurses and Father Yovhannu Surenian and written by Georg Avetian Zakarianz Jughaetsi. In the preface, the information left by Gevorg Avetyan Zakaryants testifies that in the 19th century, there were completely new demands for the use of Persian among Iranian Armenians: "My second country New Julfa, schools are established in New Julfa by a thoughtful and brave shepherd, children from our beloved nation will learn Persian apart from our Armenian."

The manuscript consists of Persian grammar, versification, a Persian-Armenian dictionary, a translation, and the contents of Chapter 8 of Saadi's "Golestan". It is noteworthy that the manual begins with the teaching of the Persian alphabet and can be considered a holistic guide for teaching Persian.

In the article, based on the manuscript textbook and lists of school subjects that have reached us, it is possible to determine the period when the Arabic script and the written Persian language became part of the educational work among the Armenians. Through the presentation and examination of the material found in the manuscript, the methodology of teaching written Persian among Iran-speaking Armenians is also introduced, comparing it with other Persian textbooks created for the locals in the same period. When studying the content of the manuscript, it is also important to understand how much "Golestan" contained in the textbook served as a teaching tool in the Armenian environment.

Key words: *grammar, manuscript, study guide, dictionary, school, written Persian, Arabic script, literary work, Golestan*

* This work has been supported by the RA MESCS Science Committee within the frame of the research project № 21T-6B125.